

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Ստյոպա Սաֆարյանի, Զարուհի Փոստանջյանի, Անահիտ Բախշյանի, Լարիսա Ալավերդյանի, Արմեն Մարտիրոսյանի և Բաֆֆի Հովհաննիսյանի` օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունենք:

Միաժամանակ հայտնում ենք, որ նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Կ. Ավագյանը, Գ. Մահակյանը, Է. Շարմազանովը, Գ. Մելիքյանը, Մ. Սարգսյանը, Վ. Բադալյանը հանդես են եկել համանման նախաձեռնությամբ, որին նույնպես Հայաստանի Հանրապետության կառավարությունը տվել է դրական եզրակացություն:

Նախագծի հեղինակներին առաջարկում ենք քննարկել նշված նախագծերը միավորելու նպատակահարմարության հարցը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով`

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## Եզրակացություն

**<<Ազգային ժողովի կանոնակարգ>> Հայաստանի Հանրապետության օրենքում  
լրացում և փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության  
օրենքի նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ սոցիալական պաշտպանության  
ուղորտում  
կարգավորման ազդեցության գնահատման**

Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ուղորտում կարգավորման  
ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <<Նորմատիվ իրավական  
ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ուղորտում կարգավորման  
ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին>> N 18-Ն  
որոշման համաձայն:

Սոցիալական պաշտպանության ուղորտում Նախագիծն ունի չեզոք  
ազդեցություն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունմամբ մրցակցային միջավայրի վրա զգալի ազդեցություն չի կարող լինել:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ վերոնշյալ օրենքների նախագծերի ընդունման դեպքում դրա կիրարկման արդյունքում մրցակցության բնագավառում զգալի ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում ապրանքային շուկայում մատակարարների քանակի ուղղակիորեն սահմանափակմանը կամ սահմանափակման հնարավորությանը:
2. միմյանց հետ մրցելու մատակարարների հնարավորության սահմանափակմանը կամ սահմանափակման հնարավորությանը:
3. միմյանց հետ մրցելու մատակարարների շարժառիթների սահմանափակմանը կամ սահմանափակման հնարավորությանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով զգալի ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ վերոնշյալ օրենքների նախագծերի ընդունման դեպքում դրա կիրարկման արդյունքում տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում զգալի ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում տնտեսական աճի և ներդրումների ներգրավման վրա:
2. «Գործարարությամբ զբաղվելը» համաթվի բաղադրիչները չեն ներառում կարգավորման ենթակա հայցագրերի ընթացակարգերը:
3. ՓՄՁ զարգացման ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած ցուցանիշների ցանկը չի ներառում խնդրո առարկա փաստաթղթերի հետ կապված ցուցանիշները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով զգալի ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թվականի  
սեպտեմբերի 23-ի N 1104-Ն որոշման պահանջներով


**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ազգային ժողովի պատգամավորների հեղինակած « Ազգային ժողովի կանոնակարգ»  
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու  
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում  
լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի  
ունենա:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ.ՔՈՒՇԿՅԱՆ



**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն  
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**Իրավական ակտերի փորձաքննության  
գործակալության պետ՝**



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին**

**Հոդված 1.** «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի երկրորդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2. Ազգային ժողովի գործունեությունը հիմնվում է քաղաքական բազմակարծության, հարցերի ազատ քննարկման, հավաքական լուծման եւ հրապարակայնության սկզբունքների վրա:

**Հոդված 2.** Օրենքի 112-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ երրորդ պարբերությունով.

«Ազգային ժողովի դռնբաց նիստերն ուղիղ եթերով՝ առ-գիծ (on-line) հեռարձակվում են Ազգային ժողովի պաշտոնական համացանցային կայքում ([www.parliament.am](http://www.parliament.am)): Սույն կետով նախատեսված հեռարձակման իրականացումը կազմակերպում է Ազգային ժողովի Աշխատակազմը»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի սեպտեմբերի 1-ից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում է փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է ամբողջացնել Ազգային ժողովի գործունեության սկզբունքները, որոնք հիմնվում են քաղաքական բազմակարծության, հարցերի ազատ քննարկման, հավաքական լուծման եւ հրապարակայնության վրա: Նախագծի ընդունումը կնպաստի Ազգային ժողովի գործունեության նկատմամբ հասարակության իրազեկվածության աստիճանի, ինչպես նաեւ՝ խորհրդարանի հեղինակության եւ վստահության բարձրացմանը: Օրենսդրական նախաձեռնության ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գործունեության թափանցիկության, հաշվետվողականության, ինչպես նաեւ՝ հրապարակայնության ապահովմամբ: Ժամանակակից պառլամենտարիզմի պահանջներից է հեռահաղորդակցության համակարգերի՝ համակարգչային ու հեռուստատեսային ցանցերի, ինչպես նաեւ՝ տեխնիկական եւ ծրագրային միջոցներով ապահովել բարձրագույն օրենսդիր մարմնի եւ հասարակության միջեւ առավել բաց երկխոսությունը: Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունը չի ապահովում Ազգային ժողովի գործունեության ամբողջական տեղեկատվության տրամադրումն ու հասանելիությունը հասարակության լայն շերտերին: Սույն նախագիծը հասարակության յուրաքանչյուր անդամին հնարավորություն կտա հաղորդակից լինել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գործունեությանը, տեղեկանալ խորհրդարանում դռնբաց նիստերի ելույթներին, հայտարարություններին, հարց ու պատասխաններին, նախագծերի քննարկումներին, դրանց քվեարկություններին եւ տեղի ունեցող քաղաքական գործընթացներին: ԱՄՆ-ի, Լատինական Ամերիկայի, Եվրոպական Միության անդամ երկրների, ինչպես նաեւ՝ այլ երկրների (Նորվեգիա, Շվեդարիա) խորհրդարանները, օգտագործելով համաշխարհային համակարգչային ցանցի ռեսուրսները, իրականացնում են նիստերի համացանցային հեռարձակում (Live Webcasting, Web TV), որի նպատակն է ապահովել օրենսդիր մարմինների գործունեության թափանցիկությունը եւ հրապարակայնությունը: Դռնբաց նիստերի համացանցային հեռարձակման պրակտիկան կիրառվում է նաեւ Եվրոպական Խորհրդարանի եւ Եվրոպայի Խորհրդի լիազուրկար նիստերի ընթացքում: